# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2015 թվականի N 711 - Ն

## ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐՈՒ-ԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՑ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) տեսչական մարմինների գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման ընդհանուր կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեսչական մարմինների գործունեության ոլորտում տնտեսավարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հիման վրա տեսչական մարմինների կառավարման խորհուրդներն ընդունում են բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հունիսի 29
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 18-ի N 711 - Ն որոշման

# Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր  Կ Ա Ր Գ

## ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են տեսչական մարմինների կողմից հանրությունից ստացված բողոքների ընդունման ընդհանուր կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Տեսչական մարմինը հանրությունից ընդունում և քննության է առնում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները:

3. Բողոքները հասցեագրվում են տեսչական մարմնին:

4. Բողոքները կարող են ներկայացվել առձեռն, էլեկտրոնային եղանակով, փոստով, ինչպես նաև կարող են փոխանցվել այլ պետական մարմիններից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Բողոքները պետք է պարունակեն դրանք ներկայացնող անձի (անձանց) վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) անուն, ազգանուն.

2) հասցե.

3) հետադարձ կապի միջոց (էլեկտրոնային փոստ կամ հեռախոսահամար).

4) անձը հաստատող փաստաթղթի տվյալներ:

6. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված բողոքներն ուսումնասիրվում են ըստ դրանց բովանդակության:

7. Անանուն և կեղծ բողոքներին ընթացք չի տրվում:

8. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա տեսչական մարմինը դիմումն ստանալու պահից 30-օրյա ժամկետում պատասխանում է բողոք ներկայացնող անձին և որոշում է ընդունում ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկատվությունը տվյալ տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության հաշվարկում ներառելու վերաբերյալ:

9. Հանրության կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ բողոքների ներկայացումը հիմք չէ ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման:

10. Բողոքները վերլուծվում, դիտարկվում և օգտագործվում են ռիսկերի կառավարման համար:

11. Եթե տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքը պարունակում է տվյալ տնտեսավարողի կողմից օրենսդրության խախտման մասին վկայող տեղեկատվություն, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ կետին, ապա տեսչական մարմինը բողոքին ընթացք է տալիս «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները վերլուծվում են տեսչական մարմնի կողմից և ամփոփվում համապատասխան ոլորտի ռիսկերը՝ տնտեսավարող սուբյեկտների անհատական ռիսկերը գնահատելու, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության աստիճանը որոշելու գործընթացում:

13. Տեսչական մարմինը վարում է ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրություն և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո քսանօրյա ժամկետում հաշվետվություն է ներկայացնում իր կառավարման խորհրդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 18-ի N 711 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՑ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են տեսչական մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտներից բողոքների ստացման, հետագա ընթացքի և դրան հետևելու հետ կապված հարաբերությունները:

2. Տնտեսավարող սուբյեկտներից տեսչական մարմնի ծառայողի (ստուգում իրականացնող անձի) գործողությունների կամ անգործության, ստուգում անցկացնելու հետ կապված բողոքներ (այդ թվում՝ ստուգման ակտի բողոքարկում) ներկայացվելու դեպքում տեսչական մարմինը տնտեսավարող սուբյեկտին ուղղորդում է լրացնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 311-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքը:

3. Սահմանված կարգով լրացված դիմում-բողոքը տեսչական մարմինը մեկօրյա ժամկետում ներկայացնում է տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի քննությանը:

4. Դիմում-բողոքն ընդունող տեսչական մարմինը տեղեկացնում է այն ներկայացնող անձին բողոքը տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովին փոխանցելու և դրան հետագա ընթացք տալու կարգի վերաբերյալ:

5. Տեսչական մարմինն իրականացնում է միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից տնտեսավարող սուբյեկտի բողոքը բավարարելու վերաբերյալ ընդունած

որոշման վերլուծություն և հաշվի է առնում այն տեսչական մարմնի ծառայողի գործունեության կատարողականի գնահատման գործընթացում, ինչպես նաև տեսչական մարմնի որակի բարելավման միջոցառումներում:

6. Տեսչական մարմինը վարում է ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրություն և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո քսանօրյա ժամկետում հաշվետվություն է ներկայացնում իր կառավարման խորհրդին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ